ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 ապրիլի Շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

47
(2713)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ՝ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ



Ազգային ժողովի պետահիրավական հանձնաժողովի երեկվա նիստի ժամանակ միջադեպ է տեղի ունեցել հանձնաժողովի նախագահ, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի եւ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր, ՀՅ Դաշնակցության անդամ Միեր Սահակյանի միջեւ: Առկա տեղեկությունների համաձայն՝նիստի վերջում բանավեճ է տեղի ունեցել, որի ժամանակ Միեր Սահակյանը հարվածել է Վլադիմիր Վարդանյանին: Ուշագրավ է, որ միանգամից ընդդիմադիր պատգամավորին ձերբակալել են, հարուցել քրեական վարույթ: Բնականաբար, այս ամենն առանց հրահանգի չի եղել. «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ անձամբ Նիկոլ Փաշինյանն է խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանին հրահանգել այս ամենն առանց հետեւանք չթողնել եւ ընթացք տալ, իսկ ոստիկանությանն էլ դիմելու կոչ է արել պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը: Նկատենք, որ նախկինում, երբ իշխանական պատգամավորներն էին հարվածում ընդդիմադիրներին ու դառնում միջադեպի պատճառ, այդ քրեական գործերն արագ կարճվում էին: Խոսենք փաստերով. 2021 թվականի դեկտեմբերի 7-ին Ազգային ժողովում միջադեպ էր տեղի ունեցել իշխանական խմբակցության պատգամավորների եւ ընդդիմադիր խմբակցության պատգամավորների օգնականների միջեւ: Վիճաբանության մասնակիցներն էին Հրաչյա Հակոբյանը, Վահագն Ալեքսանյանը, Սիսակ Գաբրիելյանը, սակայն այս ամենի արդյունքում իրավապահների տեսադաշտում էր հայտնվել ընդդիմադիր պատգամավոր Թադեւոս Ավետիսյանի օգնական Գերասիմ Վարդանյանը: Մեկ այլ դրվագ. տեսանյութերը կան, որտեղ երեւում է, թե ինչպես է 2021 թվականի օգոստոսի 5-ին Վահագն Ալեքսանյանը ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչ Վահե Հակոբյանի ելույթի ժամանակ հայհոյանքներ հնչեցնում, ապա ոտքով հարվածում: Այն բանից հետո, երբ Ալեքսանյանը հարվածեց Հակոբյանին, նրան միացան նաեւ իշխանական մյուս պատգամավորները, ինչից հետո կրկին ծեծկռտուք սկսվեց, որի հետեւանքով վնասվածքներ էին ստացել նաեւ Արթուր Ղազինյանը, Իշխան Սաղաթելյանը, Գեղամ Նազարյանը: Ամենաթարմ օրինակը. մարտի 15-ին միջադեպ էր տեղի ունեցել Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում Սիսակ Գաբրիելյանի ու Թադեւոս Ավետիսյանի միջեւ, եւ այս անգամ իշխանական պատգամավորն էր առաջինը վեր կացել, սակայն բանը ծեծկռտուքի չէր հասել:

Ստացվում է՝ պատժվում են միայն ընդդիմադիր պատգամավորները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 44-օրյա պատերազմի հանգամանքները քննող խորհրդարանական իշխանական հանձնաժողովն ապրիլին հերթական նիստն է անելու: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ չի բացառվում՝ ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանին կրկին հրավիրեն հանձնաժողով: Վերջինս մարտի 16-ին եւ մարտի 20-ին մասնակցել էր քննիչ հանձնաժողովի աշխատանքներին, ինչից հետո հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը դրվատանքի խոսքեր էր հնչեցրել նրա հասցեին, ափսոսանք էր հայտնել, որ Օնիկ Գասպարյանը գլխավոր շտաբի պետի պարտականություններին անցել է ավելի ուշ, քան պետք էր, այլապես ՀՀ ԶՈՒ-ն բարեփոխումների մի մեծ ճանապարհ անցած կլիներ: ՔՊ-ականներն Օնիկ Գասպարյանին որեւէ քաղաքական հարց չէին տվել, փոխարենը բերանները ջուր առած 5 ժամ լսել էին Օնիկ Գասպարյանի ելույթը, իսկ արդեն հարցուպատասխանի ռեժիմի ժամանակ տվել էին որոշ հարցեր՝ պատերազմի հետ կապված՝ում մեղքն էր, որ պարտվեցինք այս կամ այն տարածքում, եւ այլն: Հավանաբար, Օնիկ Գասպարյանի պատասխանները դուր են եկել ՔՊ-ականներին, եւ որոշել են նորից նրան կանչել քննիչ հանձնաժողով, լսել շարունակությունը:

Ազգային ժողովի պետահիրավական հանձնաժողովի երեկվա նիստի ժամանակ միջադեպ է տեղի ունեցել հանձնաժողովի նախագահ, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի եւ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր, ՀՅ Դաշնակցության անդամ Միեր Սահակյանի միջեւ: Առկա տեղեկությունների համաձայն՝նիստի վերջում բանավեճ է տեղի ունեցել, որի ժամանակ Միեր Սահակյանը հարվածել է Վլադիմիր Վարդանյանին: Ուշագրավ է, որ միանգամից ընդդիմադիր պատգամավորին ձերբակալել են, հարուցել քրեական վարույթ, սկսել են մանդատից զրկելու գործընթաց ու մեղադրանքն Ազգային ժողովում արդեն կառուցել են: ՔՊ-ականները միաձայն որոշել են, որ բոլորը իրավապահներին պետք է պատմեն նույն սցենարը: Համաձայն իշխանական սցենարի՝Միեր Սահակյանը եկել եւ հանձնաժողովի նիստին նստել է Վլադիմիր Վարդանյանի մոտ գտնվող աթոռին, մինչդեռ նախկինում նստում էր դռան մոտ՝անկյունում: Նշվում է, որ երեկվա նիստի ժամանակ Միեր Սահակյանն ավելի ակտիվ է եղել, տեղից ռեպլիկներ է արել ՔՊ-ական պատգամավորների խոսքերի ժամանակ: Այս ամենից հետո, իբրեւ թե, անակնկալ կերպով հարձակվել է Վլադիմիր Վարդանյանի վրա: Իրականում, սակայն, տեղի է ունեցել վիճաբանություն այն բանից հետո, երբ Վլադիմիր Վարդանյանը ձայնը բարձրացրել է, որին հետեւել են ընդդիմադիր պատգամավորի խոսքերը. «Մի՛ գոռա, ձայնդ մի՛ բարձրացրու»: Վարդանյանը հակադարձել է. «Ում վրա ուզեմ, գոռալու եմ, ինչ ուզեմ, անելու եմ»: Սա եղել է այն բանից հետո, երբ ընդդիմադիր պատգամավորը խոսել է Հռոմի ստատուտի ու Վլադիմիր Պուտինին կալանավորելու թեմայից: Վարդանյանը տեղից վեր է թռել կանգնել, ոտքի է կանգնել նաեւ Միեր Սահակյանը, բանավեճը շարունակվել է: Վարդանյանը նետվել է դեպի Միեր Սահակյանը ու ինչ-որ բան ասել, վերջինս էլ խփել է: Չնայած այս ամենին՝ՔՊ-ն արդեն կայացրել է վճիռ Միեր Սահակյանի մասով. ցուցմունքներ կտրվեն, եւ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը կգա ընդդիմադիր պատգամավորի հետեւից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝դատական համակարգը շունչը պահած սպասում է ապրիլի 7-ին, որպեսզի այդ օրը ընտրեն ԲԴԽ անդամ: Դատական համակարգում խոսակցություններ են առկա, որ եթե քաղաքական իշխանությունը դատավորներին ընտրություններից առաջ չհիշեցնի իրենց արած գործերը կամ անցյալը, ապա դատավորները առանց կաշկանդվածության ձայնը կտան Արշակ Վարդանյանին, իսկ եթե ոչ, ապա դատավորների առաջ իրենց անցյալը դնելով՝ կընտրեն իշխանության ցանկալի թեկնածու Ռուբիկ Մխիթարյանին: Նշենք, որ բարձրագույն դատական խորհրդի անդամ դառնալու համար ՀՀ վերաքննիչ քրեական դատարանից առաջադրվել են միանգամից երկու թեկնածուներ՝դատավոր Արշակ Վարդանյանը եւ իշխանության «սրտի թեկնածու» Ռուբիկ Մխիթարյանը: Իհարկե, ԲԴԽ-ն ամեն ինչ անում է, որ անդամ դառնա իրենց «սրտի թեկնածուն», իսկ դատական համակարգի զգալի մասը մյուս՝ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արշակ Վարդանյանի կողմն է, որը աչքի է ընկել իր համարձակ որոշումներով: Մասնավորապես, օրերս Արշակ Վարդանյանը որոշում էր կայացրել՝արձանագրելով, որ Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյան վթարից մահացած Սոնա Մնացականյանի դեպքով քննությունը իրականացվել է խախտումներով: Մեզ հայտնի դարձավ, որ Ռուբիկ Մխիթարյանի համար լոբբինգ է անում Մանկության դատարանի նախագահ Արթուր Աթաբեկյանը, որը եւս իր թեկնածությունը առաջադրել է ԲԴԽ անդամի թափուր տեղի համար: Ասել է թե՝դատական համակարգը երկու քարի արանքում է՝կամ դեմ պետք է գնա ԲԴԽ-ին եւ ընտրի դատավոր Արշակ Վարդանյանին, կամ ԲԴԽ-ին հաճոյանալու համար ձայնը տա Ռուբիկ Մխիթարյանին: Տեսնենք, թե ինչպես կզարգանան իրադարձությունները դատական համակարգում:

ԴԱՆԴԱՂՈՒՄ ԵՆ

Ո՞ՐՆ Է ՄԵՐ ԱՐՁԱԳԱՆՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի ու Արցախի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների մասին զրուցել է «Ինֆինիտխան Հայաստան» կուսակցության նախագահ Դավիթ Սանասարյանի հետ:

-Որքան Հայաստանի իշխանությունները, վարչապետը խոսում են խաղաղության մասին, այնքան Ադրբեջանն ավելի ագրեսիվ քաղաքականություն է վարում: Տեսնում ենք՝ ինչ իրավիճակ է Արցախում, առաջխաղացման փորձեր է անում, նոր բարձունքներ է գրավում, կրակում քաղաքացիական անձանց ուղղությամբ, ավելին՝ տեղեկություններ կան, որ Սյունիքում եւս առաջ են եկել Տեղ գյուղի հատվածում: Ի՞նչպես կգնահատեք այս իրավիճակը, ի՞նչը կկանգնեցնի հակառակորդին, ի՞նչ ելքեր եք տեսնում:

-Եթե մենք անընդհատ խոսենք խաղաղությունից, բայց որեւէ քայլ չձեռնարկենք, արտաքին քաղաքական փոփոխություններ չանենք, մենք չեն կարող լուրջ լուծումներ ակնկալել, իսկ խաղաղության մասին, առհասարակ, կարող ենք չմտածել: Ես կարծում եմ, որ պետք է շատ արագ վերանայենք մեր արտաքին քաղաքականությունը, մեր միջազգային գործընկերների հետ փորձենք գտնել այնպիսի լուծումներ, որոնք չեն լինի եւ-եւ տարբերակով: Այդպես չի լինում, քանի որ աշխարհը գնալով տարանջատվում է, սեւ-սպիտակի է բաժանվում: Պետք է հասկանանք, որ, ունենալով Ռուսաստանի նման դաշնակից, մենք գնալով բարդացնելու ենք մեր վիճակը: Թեեւ մեր այլընտրանքը մեծ չէ, բայց նման հնարավորություն վաղը չենք ունենալու, չենք կարող հույս դնել մի դաշնակցի վրա, որն արդեն տեւական ժամանակ է՝ ցույց է տալիս, որ դաշնակից չէ: Նա հստակ իր շահերն ունի. ես չեմ ասում, որ պետք է անտեսի իր շահերը, բայց եթե դաշնակից ես, պետք է նաեւ դաշնակցիդ շահերը նկատի ունենաս: Այս պարագայում տեսնում ենք, որ շահերի համընկնում չկա:

-Այն, որ Ռուսաստանը պատշաճ չի կատարում իր դաշնակցային պարտավորությունները, դա ակնհայտ է, իսկ մենք ի՞նչ ենք անում մեր անվտանգությունն ապահովելու համար, բավարա՞ր եք գնահատում իշխանությունների քայլերն այս ուղղությամբ:

-Եթե դու անկախ պետություն ես, ունես ինքնիշխանություն, ինքդ պետք է պատասխանատվություն կրես նաեւ— ստեղծված իրավիճակի համար: Ես չեմ ասում՝ Ռուսաստանը պատասխանատու է մեզ համար, ես ասում եմ, որ մեր սխալ քայլերի արդյունքում տեւական ժամանակ մեր ինքնիշխանությունը քիչ-քիչ զիջել ենք Ռուսաստանին եւ արդյունքում ստացել ենք այս իրավիճակը: Մեր իշխանությունները պետք է հստակեցնեն իրենց քայլերը. այսօրվա աշխարհն ու երեկվանը տարբեր են, մենք պետք է որոշում կայացնենք՝ ինչ ենք ուզում: Օրվա իշխանությունները դանդաղում են, իրենք մտածում են՝ ճկունություն են ցուցաբերում, բայց շատ վտանգավոր է դա: Մենք պետք է հստակ հասկանանք՝ ունենք արդյոք դաշնակից, թե, ինչպես 44-օրյա պատերազմի ժամանակ, միայնակ ենք մնալու:

-Այսինքն՝ կարծում եք աշխարհաքաղաքական վեկտորի փոփոխությո՞ւն է անհրաժեշտ Հայաստանին: Նման իրավիճակում ի՞նչ հետեւանքներ կունենա սա: Եթե Ռուսաստանին ասում ենք՝ հեռացիր, ունե՞նք այլընտրանք:

-Վաղուց էր անհրաժեշտ այդ փոփոխությունը: Աշխարհաքաղաքական վեկտորի փոփոխություն չի նշանակում, որ արթնանում ենք, ասում ենք՝ վերջ, այսօր այս պետության դաշնակիցն ենք: Պետությունների հետ հարաբերություններն այդպես չեն կառուցում, բայց պետությունները խոսում են իրար հետ, որպեսզի միասնական լուծեն ընդհանուր շահերը: Մենք, տեւական ժամանակ է, Ռուսաստանի դաշնակից ենք հռչակված, մեր ռազմավարական դաշնակիցը զինում է մեր թշնամուն ու ներկայացնում, թե դա բիզնես է, իսկ մեր ռեակցիան ո՞րն է դրան, հիմա դաշնակի՞ց ենք, թե՞ գուբեռնիա: Այն քաղաքական գործիչները, որ այսպես են պատկերացնում, պետք է որպե առաջ պատասխանատվության ենթարկվեն:

-Չնայած Ադրբեջանի սադրանքներին՝ հայկական կողմը շարունակում է խոսել խաղաղության մասին: Նիկոլ Փաշինյանն ասում է՝ անկախ ամեն ինչից՝ խաղաղության պայմանագիր լինելու է: Այս պայմաններում ինչպե՞ս եք պատկերացնում խաղաղությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, նոր փաստաթուղթ հնարավո՞ր է:

-Հայաստանը, իհարկե, չպետք է ասի, որ պատերազմի է պատրաստվում, բայց պետք է իր գործողություններով պատրաստ լինի հնարավոր բոլոր զարգացումներին: Ես չեմ տեսնում, որ խաղաղության գնալու հնարավորություն կա այս պահին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՅՏՆԻ Է

ԿՔՆՆԱՐԿՎԻ ՄԻՊ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՐՑԸ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը ապրիլի 4-ի արտահերթ նիստում կքննարկի ՄԻՊ թեկնածու առաջադրելու հարցը: ՄԻՊ թեկնածուները երկուսն են. իշխող ՔՊ-խմբակցությունն այդ պաշտոնում առաջադրել է Անահիտ Մանասյանի թեկնածությունը, իսկ ընդդիմադիր երկու խմբակցություններն առաջադրել են Էդգար Ղազարյանի թեկնածությունը:

Ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց եւ առնվազն մեկ թեկնածու առաջադրվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու մասին հարցը քննարկվում է իրավասու մշտական հանձնաժողովի, այս դեպքում՝ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի առաջիկա հերթական նիստում կամ կարող է քննարկվել հանձնաժողովի արտահերթ նիստում: Ազգային ժողովին ՄԻՊ թեկնածու է առաջադրվում ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի որոշմամբ՝ խմբակցությունների առաջադրած մեկական թեկնածուների թվից, այսինքն՝ գլխադասային հանձնաժողովի անդամներն իրենց քվեարկությամբ պետք է ընտրեն առաջադրված թեկնածուներից մեկին եւ նրան առաջադրեն ԱԺ-ին:

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի անդամները 7-ն են, մեծամասնություն են կազմում ՔՊ խմբակցության պատգամավորները՝ 4/3 հարաբերակցությամբ: Հարցի քննարկման ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում, իրավասու մշտական հանձնաժողովի նախագահն Ազգային ժողովի նախագահին է ուղարկում հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքը եւ հայտնում որոշման մասին:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

«Ռոսսելխոզնադզոր»-ը դիմել է Հայաստանի անասնաբուժական ծառայությանը՝ խնդրելով ապրիլի 5-ից դադարեցնել կաթնամթերքի մատակարարումը Ռուսաստան: Համապատասխան հայտարարությունը տարածել է Ռուսաստանի տեսչական մարմնի մամուլի ծառայությունը:

Մարտի 20-ից 24-ը Հայաստանի կաթի վերամշակման ձեռնարկությունների տեսչության արդյունքները քննարկվել են մարտի 31-ին ՌԴ եւ ՀՀ անասնաբուժական ծառայությունների միջեւ կայացած բանակցությունների ընթացքում:

«Խորհրդակցության ընթացքում բարձրացվել է հայկական անասնաբուժական ծառայության կողմից արտադրվող կաթնամթերքի անվտանգությունը ռուս ստացողների համար երաշխավորելու անհնարինության հարցը»,-նշում է «Ռոսսելխոզնադզոր»-ը:

Նշվում է, որ դիմումը կապված է տեսչության անբավարար արդյունքների հետ, որոնց մասին հաղորդվել էր ավելի վաղ:

«Մատակարարումների վերսկսման հնարավորությունը կքննարկվի լրացուցիչ»,- հավելում է գերատեսչությունը՝ հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ հայկական կողմի իրականացրած աշխատանքների արդյունքներով:

Ավելի վաղ «Ռոսսելխոզնադզոր»-ը հայտարարել է, որ կքննարկի Հայաստանից Ռուսաստան կաթնամթերքի ներմուծման սահմանափակումներ մտցնելու հարցը վատ վերահսկողության եւ հայկական կողմից սահմանափակող միջոցների խախտումների պատճառով: Հայկական կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ Հայաստանի կաթի վերամշակման ձեռնարկություններն օգտագործում են Իրանի Իսլամական Հանրապետության ձեռնարկությունների արտադրած հումքը, որոնց նկատմամբ «Ռոսսելխոզնադզոր»-ը սահմանափակող միջոցներ է կիրառել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՒՆԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ



Երեկ պարզ դարձավ, որ ձերբակալվել է Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանը: Նա պատգամավոր է եւ ունի անձեռնմխելիություն:

Սահմանադրության 96-րդ հոդվածը սահմանում է պատգամավորի անձեռնմխելիությունը:

Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորը, առանց Ազգային ժողովի համաձայնության, չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տեւել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

Այսպիսով, պատգամավորը ձերբակալվել է, սակայն 72 ժամից ավելի չի կարող մնալ անազատության մեջ: Հետագա գործընթացների համար արդեն, եթե որոշեն պատգամավորին կալանավորել, ապա խորհրդարան պետք է գա գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը եւ նման միջնորդություն ներկայացնի:

ՊԱՏՐԱՍՏ Է ԲԱՆԱՎԵՃԻՆ

Հայաստանի Հանրային հեռուստաընկերությունը մարտի 29-ին բանավեճի հրավեր էր արել Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնի իշխանական թեկնածու Անահիտ Մանասյանին եւ «Հայաստան» ու «Պատիվ ունեմ» խմբակցությունների համատեղ որոշմամբ առաջադրված թեկնածու Էդգար Ղազարյանին: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Էդգար Ղազարյանն ասաց, որ պատրաստ է Մանասյանի հետ բանավեճին. «Ցանկացած տեղ ցանկացած ժամի պատրաստ եմ բանավեճի»,-ասաց նա: Դիմեցինք նաեւ Անահիտ Մանասյանին, որը, «Ժողովուրդ» օրաթերթի նույնաբովանդակ հարցին ի պատասխան, ասաց, որ իր հարցազրույցն արդեն տվել է (նկատի ունի Պետրոս Ղազարյանի հետ հարցազրույցը), այսինքն՝ նա չի մասնակցի բանավեճի: Հիշեցնենք, որ Էդգար Ղազարյանն էլ իր հերթին հանդիպելու առաջարկ է արել ԱԺ «Քաղաքացիական խմբակցության» պատգամավորներին, սակայն դեռեւս արձագանք չկա՝ կհանդիպեն իշխանությունները ընդդիմության թեկնածուին, թե ոչ:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԱՇՏՈՆՅԱ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ՊԵՏՔ

Ֆրանսիայի Օվերնյ-Ռոն-Ալպ շրջանի խորհրդի նախագահ Լորան Վոքիեին երեկ հանդիպել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Ֆրանսիացի պաշտոնյան Հայաստանի վարչապետի հետ կիսվել է Սյունիքի մարզ կատարած այցից տպավորություններով:

«Մեզ համար շատ կարեւոր էր գնալ հենց Սյունիքի մարզ եւ լինել առաջին ֆրանսիական տեղական իշխանության մարմինը, որը համագործակցություն կսահմանի մարզի հետ, որովհետեւ մենք շատ լավ հասկանում ենք՝ ինչքան առանցքային է Սյունիքը Հայաստանի տարածքի ամբողջականության համար», - ասել է նա՝ հավելելով, որ տեսանելի է ամբողջ ծանրությունն ու դաժանությունը, որ կա մարզում հիմա:

«Գյուղերը, որ մեկուսացված են, ճանապարհները, որ կտրված են, երբեմն մի քանի հարյուր կամ մի քանի տասնյակ մետրի վրա ադրբեջանական դրոշները երեւում են», - նշել է Լորան Վոքիեն՝ հավելելով, որ նկատել է միասնության ու համախմբման ոգին տեղում:

Նիկոլ Փաշինյանը, ըստ հաղորդագրության, ասել է, որ, ի հեճուկս բոլոր մարտահրավերների, Հայաստանի զարգացման օրակարգից ոչ մի րոպե չպետք է շեղվել: Նա հույս է հայտնել, որ Եվրամիության քաղաքացիական առաքելության ներկայությունը հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով կդառնա լրացուցիչ կայունության եւ անվտանգության գործոն:

Նրանք կարեւորել են տարածաշրջանում կայունության ու խաղաղության ուղղությամբ միջազգային հանրության կողմից հետեւողական ջանքերի գործադրումը:

Ֆրանսիայի Օվերնյ-Ռոն-Ալպ շրջանի շրջանային խորհրդի նախագահ Լորան Վոքիեն միջազգային հանրության արձագանքը համապատասխան չի համարում ադրբեջանական վայրագություններին, նա Ադրբեջանի, Ալիեւի ռեժիմի դեմ պատժամիջոցների անհրաժեշտություն է տեսնում: Լորան Վոքիեն նման դիրքորոշում հայտնեց արդեն Երեւանում Արցախի ԱԳ նախարար Սերգեյ Ղազարյանի հետ ասուլիսում:

«Այն, ինչ տեղի է ունենում, նորմալ չէ, եւ միջազգային հանրության արձագանքը չի համապատասխանում այստեղ տեղի ունեցածին: Մի հասարակ հարց տամ. որոշվեց, որ ռուսական գազ այլեւս չի գնվի Ուկրաինայի որոշ տարածքների օկուպացիայից հետո. արդյոք ադրբեջանական գազն ավելի ընդունելի՞ է, ինչո՞ւ հետեւանք չեղավ տեղի ունեցածին, ինչո՞ւ չկան պատժամիջոցներ Ալիեւի ռեժիմի դեմ: Այդ հարցերը ես ձեզ հետ միասին կիսում եմ, եւ դրանք ինձ վրդովեցնում են նույնչափ»,-ասաց Օվերնյ-Ռոն-Ալպ շրջանի շրջանային խորհրդի նախագահը:

Ըստ նրա՝ դրան լուծում տալու համար պետք է լինեն մարդիկ՝ հայտնի անձնավորություններ, որոնք հանձնառություն կվերցնեն եւ հայերի կողքին կլինեն ու կբացատրեն շատերին, քանի որ կան մարդիկ, որոնք պարզապես չեն հասկանում տիրող իրավիճակը:

Լորան Վոքիեն նկատեց՝ Ադրբեջանը լուրջ պրոպագանդիստական աշխատանք է կատարում: Նա ու իր պատվիրակության 40 անդամները Հայաստան այցի շրջանակում եղել են Սյունիքում: «Մենք հատուկ ցանկացանք, որ բազմաքանակ պատվիրակություն լինի: Իմ պատվիրակության բոլոր անդամները կկարողանան ասել՝ ես եղել եմ տեղում, ես տեսել եմ՝ ինչ է կատարվում, ես հասկանում եմ, թե ինչ է կատարվում: Այն վայրերում, որտեղ մենք եղել ենք, հենց հաջորդ օրը ադրբեջանական ուժերը եկել ու գրավել են Հայաստանի ինքնիշխան տարածքից»,- նշեց նա:

Ֆրանսիայի Օվերնյ-Ռոն-Ալպ շրջանի շրջանային խորհրդի նախագահը նաեւ իր հիացմունքն արտահայտեց արցախցիների նկատմամբ: «Ես մոլորակի վրա որեւէ այլ անկյուն չեմ ճանաչում, որտեղ 120 հազար մարդ կատարելապես շրջափակված է, միտքս չի գալիս աշխարհում որեւէ այլ անկյուն, որտեղ այս կարգի բարբարոսություն է տեղի ունենում»,- ասաց նա:

Լորան Վոքիեն ասաց՝ չի կարող կառավարության անունից պարտավորվել, բայց իրենք իրենց մակարդակով կանեն ամեն ինչ, որ հնարավորինս կարողանան թեթեւացնել իրավիճակը: Ֆրանսիական պատվիրակության անդամները հիացած են, որ արցախցիները չեն ընկրկում:

Արցախի ԱԳ նախարար Սերգեյ Ղազարյանն էլ Վոքիեին շնորհակալություն հայտնեց Արցախի նկատմամբ օրինակելի վերաբերմունքի համար:

Ն.Հ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆՀՆԱՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ

«Ուկրաինայում տիրող իրավիճակի հարցով խաղաղ ծրագրերի իրականացումն առայժմ անհնար է, քանի որ Կիեւը չի կարող չհնազանդվել իր կուրատորներին, որոնք պնդում են, որ պատերազմը շարունակվի»,- լրագրողներին ասել է ՌԴ նախագահի խոսնակ Դմիտրի Պեսկովը:

«Ինքը՝ ՌԴ նախագահը, ասել է, որ քննարկել է բուն ծրագիրը, դրա առանձին դրույթները, բայց տեղին չէ համեմատել այդ երկու գաղափարները: Ես նկատի ունեմ այն, ինչ հնչեցրել է Չինաստանի նախագահը, եւ այն, ինչի մասին խոսում է նախագահ Լուկաշենկոն»,- ասել է Պեսկովը՝ պատասխանելով հարցին, թե հրադադարի որ ձեւաչափն է (Բելառուսի կամ Չինաստանի առաջարկած ձեւաչափը) Կրեմլում նախընտրելի համարվում:

Պեսկովը նաեւ հայտարարել է, որ Պեկինի ծրագիրն այժմ չի կարող իրագործվել:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄՆՈՒՄ Է ԼԱՐՎԱԾ

«Իրավիճակը Լեռնային Ղարաբաղում եւ Աֆղանստանում մնում է լարված, կա ապակայունացման վտանգ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության երկրներում»,- ասել է ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղար Իմանգալի Տասմագամբետովը. տեղեկացրել է «Ինտերֆաքսը»:

«Պահպանվում է լարվածությունը կովկասյան տարածաշրջանում՝ որպես Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բազմամյա հակասությունների հետեւանք»,- ուրբաթ ասել է Տասմագամբետովը ՀԱՊԿ-ի քարտուղարության եւ միավորված շտաբի ղեկավար կազմի ընդլայնված խորհրդակցությունում:

Նրա խոսքով՝ Լեռնային Ղարաբաղում եւ հայ-ադրբեջանական սահմանին իրադրության հետ կապված ռիսկերի պատճառով իրավիճակը հղի է լուրջ ապակայունացմամբ:

«Անհանգիստ է կենտրոնաասիական շրջանում. խորանում է ՀԱՊԿ-ի գծով դաշնակիցների տարածք ծայրահեղական գաղափարախոսության եւ ահաբեկչական խմբավորումների ներթափանցման վտանգը: Առանձնապես մտահոգում են համալիր սպառնալիքները, որոնք բխում են Աֆղանստանի տարածքից»,- ասել է Տասմագամբետովը:

Նա ընդգծել է, որ ՀԱՊԿ-ում իրականացվում է մշտական աշխատանք գոյություն ունեցող եւ նոր առաջացող մարտահրավերներին եւ սպառնալիքներին դիմակայելու մեխանիզմի կատարելագործման ուղղությամբ:

ՈՒՇԱԳՐԱՎ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Ո՞ՐՆ Է ԵՂԵԼ ԾԵԾԿՌՏՈՒՔԻ ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌԸ

ArmLur.am-ին նոր մանրամասներ են հայտնի դարձել ԱԺ-ի երեկվա միջադեպից: Մասնավորապես, տեղեկացել ենք, թե ինչն է եղել վիճաբանության թեման, որ վիճել են դատգամավորները, ու բանը հասել է բռունցքներին: Վլադիմիր Վարդանյանն անդրադարձել է ՍԴ-ի վավերացրած կոնվենցիային, որը Հռոմի սատատուի մասին է: Այդ ժամանակ Միհեր Սահակյանը միջամտել է եւ հարց բարձրացրել, թե ինչ կարծիք ունեն իրենք Ռուսաստանի մասով: Վլադիմիր Վարդանյանը նրան ասել է՝ լռի եւ կլսի, թե ինչ կարծիք ունեն, որից էլ սկսել են քաշքռուկն ու հարվածները միմյանց:

Հիշեցնենք, որ երեկ ԱԺ պետահիրավական հանձնաժողովում փակ քննարկման ժամանակ ծեծկռտուք է տեղի ունեցել: Ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միհեր Սահակյանը հարվածել է ՔՊ խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանին:

ArmLur.am-ին հայտնի դարձավ նաեւ, որ Վլադիմիր Վարդանյանին տարել են «Նաիրի» ԲԿ: Նրան ԿՏ հետազոտության են ենթարկել: Նշենք, որ վնասվածքը եղել է քունքի շրջանում:

Ավելի ուշ Միհեր Սահակյանի փաստաբանը՝ Ռուբեն Մելիքյանը, իր սոցիալական ցանցում հրապարակել է մանրամասներ:

Հաշվի առնելով ԱԺ ՔՊ-ական մի շարք պատգամավորների կողմից ընդդիմադիրների նկատմամբ անպատիժ ձեւով ֆիզիկական ուժ կիրառելու, նրանց վրա անպատիժ ձեւով հարձակվելու հարուստ փորձը՝ Միհեր Սահակյանը գնահատել է իրավիճակը այնպես, որ առկա է Վլադիմիր Վարդանյանի կողմից իրեն հարվածելու իրական վտանգ, եւ ինքնապաշտպանության նկատառումով նրան հասցրել է մեկ հարված:

«Ստանձնել եմ ձերբակալված ընդդիմադիր պատգամավոր Միհեր Սահակյանի պաշտպանությունը: Այս պահին նա գտնվում է ոստիկանության Արաբկիրի բաժնում, շուտով հավանաբար կտեղափոխվի Երեւանի քննչական (Պարույր Սեւակի փողոց):

Լիազորված եմ հանրությանը ներկայացնել Միհեր Սահակյանի պարզաբանումը միջադեպի կապակցությամբ. Պետահիրավական հանձնաժողովի փակ նիստի ժամանակ ՔՊ-ական պատգամավոր, հանձնաժողովի նախագահ Վ. Վարդանյանը ընդդիմադիր պատգամավորների նկատմամբ դրսեւորել է ագրեսիվ վարքագիծ, իսկ Միհեր Սահակյանը խոսքով արձագանքել է այդ վարքագծին: Այնուհետեւ ՔՊ-ական նույն պատգամավորը նստած տեղից կանգնել է ու քայլել Միհեր Սահակյանի ուղղությամբ: Հաշվի առնելով ԱԺ ՔՊ-ական մի շարք պատգամավորների կողմից ընդդիմադիրների նկատմամբ անպատիժ ձեւով ֆիզիկական ուժ կիրառելու, նրանց վրա անպատիժ ձեւով հարձակվելու հարուստ փորձը՝ Միհեր Սահակյանը գնահատել է իրավիճակը այնպես, որ առկա է Վարդանյանի կողմից իրեն հարվածելու իրական վտանգ, եւ ինքնապաշտպանության նկատառումով նրան հասցրել է մեկ հարված: Հարվածի արդյունքում վտանգը չեզոքացվել է:

Հայհոյանքներ չեն հնչել, այլ հարվածներ չեն եղել»,- գրել է Մելիքյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՄԵԹԱԴՈՆ ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեի Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի աշխատակիցները բացահայտել են թմրամիջոցների ապօրինի տեղափոխման հերթական դեպքը:

Օրերս Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ժամանած Իրանի քաղաքացու վարքագիծը մաքսային ծառայողների մոտ կասկածի տեղիք է տվել: Մեղրիի մաքսային կետ-բաժնի ծառայողների կողմից նշված քաղաքացու ուղեբեռի նկատմամբ իրականացված մանրակրկիտ հսկողության արդյունքում պարզվել է, որ ճամպրուկում, ի թիվս այլ ապրանքների, առկա է 3 հատ խոնավ սրբիչ, ինչն էլ ավելի է խորացրել կասկածները: ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության Սյունիքի տարածաշրջանային բաժնի աշխատակիցների հետ համատեղ իրականացված հետագա հսկողության արդյունքում պարզվել է, որ հիշյալ սրբիչները ներծծված են Մեթադոն տեսակի թմրանյութով:

Հարկ է նշել, որ այս եղանակով թմրամիջոցների տեղափոխումը զգալիորեն բարդացնում է մաքսային մարմինների կողմից դրանց հայտնաբերումը:

Տեքստիլ արտադրանքի մեջ ներծծված թմրամիջոցները մաքսանենգների կողմից հիմնականում փոխադրվում են ճամպրուկներով, ուր առկա են լինում նաեւ բազմաթիվ անձնական օգտագործման իրեր եւ հագուստ:

Հայտնաբերված դեպքի կապակցությամբ նախապատրաստված նյութերն ուղարկվել են Քննչական կոմիտե, որտեղ ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Մաքսային հսկողությունից թաքցման եղանակով ՀՀ պետական սահմանով ապօրինի եղանակով թմրանյութ տեղափոխած ԻԻՀ քաղաքացի Մ.Զ.-ն ձերբակալվել է:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ քննչական կոմիտեն զարգացնում է հասարակական կառույցների հետ համագործակցությունը:

2023թ. մարտի 27-ին ՀՀ քննչական կոմիտեում ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչության մասնագետները հանդիպում են ունեցել «Վորլդ Վիժն Ինթերնեյշընալ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից Հայաստանում իրականացվող «Միասին՝ ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի թիմի հետ:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են ծրագրի շրջանակներում հատուկ քննիչների համար մշակված «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ աշխատանքում տրավմաների տեղեկացվածության եւ զոհակենտրոն մոտեցումների ապահովման» ուղեցույցի, դրա կիրառման մեթոդաբանության նախագծերը: Դրանք մշակվել են նաեւ ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչության մասնագետի համահեղինակությամբ:

Ուղեցույցում սահմանվում են մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով տուժող ճանաչված անձանց հետ աշխատանքում տրավմաների տեղեկացվածության եւ զոհակենտրոն մոտեցումներն ապահովող իրավահարաբերությունները, այդ վարույթներով քննչական գործողություններ կատարելու առանձնահատկությունները, դրանց իրականացման որոշակի տակտիկական եւ մեթոդական մոտեցումները:

Ծրագրի ղեկավար Տիգրան Հովհաննիսյանն իր խոսքում ընդգծել է, որ ՀՀ քննչական կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող ծառայողներն առանցքային դերակատարում ունեն մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերի քրեական վարույթներով զոհակենտրոն մոտեցում եւ զոհակենտրոն քննություն ապահովելու հարցում:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ ուղեցույցի ներդրման եւ կիրառելության ապահովմանն առնչվող խնդիրները:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 30-ից 31-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 90 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՇԱԽՄԱՏ

ՄՐՑՈՒՄ ԵՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԸ

Սույն թվականի մարտի 30-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում անցկացվել է միջհիմնարկային շախմատային մրցաշար տարբեր քրեակատարողական հիմնարկների լավագույն դատապարտյալների միջև:

Քրեակատարողական ծառայությունից հայտնում են, որ մրցաշարի նպատակն էր ձեւավորել Հայաստանի շախմատի դատապարտյալների հավաքականը՝ դատապարտյալների շախմատի աշխարհի առաջնությանը մասնակցելու համար, որը տեղի կունենան աշնանը:

Խաղի ընթացքին հետեւել են Քրեակատարողական ծառայության պետ, գեներալ-մայոր Սերգեյ Ատոմյանը, նրա առաջին տեղակալ, արդարադատության գնդապետ Ամբակում Գրիգորյանը, Շախմատի ակադեմիայի հիմնադիր-նախագահ Սմբատ Լպուտյանը եւ այլք:

Մինչ խաղի մեկնարկը Սերգեյ Ատոմյանը հաջողություն է մաղթել մասնակիցներին՝ ընդգծելով շախմատի դերն ու նշանակությունն անհատի ձեւավորման, կայացման ու հավասարակշռված դառնալու գործընթացում:

Սմբատ Լպուտյանը ՖԻԴԵ-ի կողմից շնորհակալագրեր է հանձնել Սերգեյ Ատոմյանին, Ամբակում Գրիգորյանին եւ ծառայության կենտրոնական մարմնի այլ ներկայացուցիչների՝ 2022 թվականի՝ դատապարտյալների շախմատի աշխարհի առաջնության կազմակերպման գործում աջակցության եւ մեծ ներդրման համար, իսկ առաջնությանը մասնակցած դատապարտյալներին տվել է հավաստագրեր:

Միջհիմնարկային մրցաշարի արդյունքում լավագույնս հանդես են եկել դատապարտյալներ Հ. Աբաջյանը՝ «Սեւան» քրեակատարողական հիմնարկից, Ա. Գորոյանը, Գ. Դավեյանը՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից, եւ Ռ. Սարգսյանը, Կ. Բերբերյանը, Մ. Սարգսյանը՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկից:

Նշված 6 դատապարտյալները կներկայացնեն Հայաստանը դատապարտյալների միջեւ անցկացվող շախմատի աշխարհի առաջնությանը:

ՄԱՐՔ

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

2019թ. դեկտեմբերի 27-ից Իջեւանի բժշկական կենտրոնի տնօրեն, Երեւանի բնակիչ,1973թ. ծնված Էդուարդ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2009թ. հունվարից մինչեւ 2019թ. հուլիսի 1-ը հանդիսանալով ՀՀ ՊՆ զորամասի (Բերդի առանձին բժշկական ջոկաս) հրամանատար, դաշտոնատար անձ, կոչումով բուժծառայության փոխգնդապետ, դարտավոր լինելով հոսպիտալում բաղաքացիական անձանց անվճար բուժսպասարկելուց առաջ պահպանել ՀՀ-ում գործող համապատասխան օրենսդրությամբ եւ մի շարք իրավական ակտերով նախատեսված դրույթների պահանջները, անփույթ վերաբերմունք է դրսեւորել ծառայության նկատմամբ, առանց հաստատված գնացուցակով սահմանված 200.000 դրամ գանձելու, 2019թ. հունվարի 23-ին վիրահատել է Պառավաքարի բնակիչ Անահիտ Աղաջանյանին, ապա 2019թ. հունվարի 29-ին, առանց գնացուցակով սահմանված 180.000 դրամ գանձելու, վիրահատել է Մովսեսի բնակիչ Վոլոդյա Ավալյանին, 2019թ. հունվարի 30-ին, առանց գնացուցակով սահմանված 150.000 դրամ գանձելու, վիրահատել է Վազաշենի բնակիչ Գայանե Ամիրխանյանին, ինչի հետեւանքով էական վնաս է դատճառվել, ընդհանուր 670.000 հազար դրամ զինհոսպիտալի դրամարկղ չի վճարվել:

Է. Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մասով: Է. Գրիգորյանը նախաքննության ընթացքում պետությանը պատճառած 670 հազար դրամն ամբողջությամբ վերականգնել է: 2019թ. հոկտեմբերի 17-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ռաֆիկ Մելքոնյանը որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու եւ Է. Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: 2020թ. փետրվարի 21-ին վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու եւ գործը նոր քննության ուղարկելու մասին: 2022թ. հունիսի 17-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Սամվել Մարդանյանը որոշել է Է. Գրիգորյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մասով, վաղեմության ժամկետն անցնելու հիմքով նրան ազատել այդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Դատախազությունը բողոքարկել է այդ որոշումը՝ խնդրելով բեկանել այն եւ Է. Գրիգորյանին դատապարտել ազատազրկման 2 տարի ժամկետով՝ սահմանելով 2 տարի ժամկետով փորձաշրջան: 2022թ. դեկտեմբերի 8-ին վերաքննիչ դատարանը որոշել է վերաքննիչ բողոքը մերժել, Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2022թ. հունիսի 17-ի որոշումը թողնել անփոփոխ: Է. Գրիգորյանի պաշտպան Վրեժ Ներկարարյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել: 2023թ. մարտի 28-ին վճռաբեկ դատարանի դատավոր Ս. Ավետիսյանը որոշել է Է. Գրիգորյանի պաշտպան Վրեժ Ներկարարյանի վճռաբեկ բողոքը վերադարձնել, վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու եւ այն կրկին ներկայացնելու համար տրամադրել 10-օրյա ժամկետ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՅԼ

ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

ԱՄՆ 45-րդ նախագահ Դոնալդ Թրամփին մեղադրանք է առաջադրվել Նյու Յորքի երդվյալ ատենակալների կողմից: Դոնալդ Թրամփին մեղադրում են դոռնոստող Սթորմի Դենիելսին լռեցնելու նպատակով նրան կաշառելու համար:

Սա պատմական քայլ է, քանի որ առաջին անգամ է, որ ԱՄՆ որեւէ նախկին նախագահի քրեական մեղադրանք է առաջադրվում: Առաջին անգամ է, որ նախկին նախագահից պետք է մատնահետքեր վերցնեն, լուսանկարեն ոստիկանության բաժանմունքում եւ նստեցնեն մեղադրյալի աթոռին:

Սթորմի Դենիելսը պնդում է, որ 2006 թվականին հարաբերություններ է ունեցել Թրամփի հետ, եւ որ Թրամփի փաստաբան Մայքլ Քոհենն իրեն 130.000 դոլար է վճարել, որպեսզի ինքը դրա մասին չբարձրաձայնի: Թրամփը հերքել է սա՝ մեղադրանքի առաջադրումը որակելով որպես քաղաքական հետապնդում:

Առայժմ պարզ չէ, թե կոնկրետ ինչ մեղադրանք է առաջադրվել նախկին նախագահին, սակայն ամերիկյան ԶԼՄ-ները

գրում են, որ Թրամփին սպառնում է երկու տասնյակից ավելի մեղադրանք՝ կապված բիզնես խարդախությունների հետ:

BBC-ն հաղորդում է, որ Թրամփը պետք է Ֆլորիդայից մեկնի Նյու Յորք, որպեսզի ապրիլի 4-ին կանգնի դատարանի առջեւ:

ԱՄՆ Հանրապետական կուսակցության անդամները պաշտպանել են Դոնալդ Թրամփին՝ քննադատելով դատախազներին, իսկ դեմոկրատները նշել են, որ ոչ ոք օրենքից վեր չէ:

Թրամփն իր հերթին հայտարարել է, որ Նյու Յորքում արդար դատավարություն չի ակնկալում:

«Նրանք իմ դեմ այս կեղծ, անազնիվ եւ խայտառակ մեղադրանքն առաջադրել են, որովհետեւ ես կանգնած եմ ամերիկացի ժողովրդի կողքին, եւ նրանք գիտեն, որ ես չեմ կարող Նյու Յորքում արդար դատավարություն ակնկալել»,- գրել է ԱՄՆ նախկին նախագահն իր սեփական Truth Social սոցիալական ցանցում:

Թրամփի համախոհները գիշերը հավաքվել են Ֆլորիդայում գտնվող նրա «Մար ա Լագո» կալվածքի առջեւ՝ իրենց աջակցությունը հայտնելով Սպիտակ տան նախկին ղեկավարին եւ թափահարելով 2024 թվականի նախագահական ընտրարշավի դրոշները:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ՃՏՊ. 9 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԱՎԵԼԱՑՐԵԼ Է ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Վրաստանն ավելացրել է մարդատար ավտոմեքենաների արտահանումը Ռուսաստան, Հայաստան, Ղրղզըստան եւ Ղազախստան:

Մասնավորապես, հունվար-փետրվարին Ռուսաստան է ուղարկվել 13,5 մլն դոլարի 978 ավտոմեքենա (2022թ.՝ 209 մեքենա):

Վրաստանն ավտոմեքենաներ չի արտադրում, բայց ակտիվորեն ներմուծում է դրանք: Այսպես, 2023թ. հունվար-փետրվարին ԱՄՆ-ից բերվել է 97 մլն դոլարի 8,2 հազար ավտոմեքենա, Գերմանիայից՝ 1,3 հազար մեքենա (29,2 մլն դոլար):

«Ավտոստատի» տվյալներով՝ նշված ժամանակահատվածում Ռուսաստանում վաճառվել է մոտ 9,8 հազար ավտոմեքենա (մինչեւ երեք տարեկան), որոնք ստացվել են զուգահեռ ներմուծմամբ, սակայն դրանք հիմնականում մեքենաներ էին Չինաստանից:

Ընդհանուր առմամբ, Վրաստանի վիճակագրական գործակալության տվյալներով՝ հունվար-փետրվարին մարդատար ավտոմեքենաների վերարտահանումը հասել է տասնամյա առավելագունին՝ 13,5 հազար ավտոմեքենա (236,8 մլն դոլար ընդհանուր արժողությամբ): Ընդ որում՝ 2019թ. հանրապետությունը վերարտահանել է 59,8 մլն դոլարի 9,7 հազար ավտոմեքենա ամբողջ տարվա ընթացքում:

800 ՈՒՂԵՎՈՐ՝ ԽՑԱՆՄԱՆ ՄԵՋ

Ավելի քան 30 ավտոբուս՝ մոտ 800 ուղեւորներով, ձյան պատճառով խցանման մեջ է մնացել Ռոստովի մարզում: Այս մասին ՏԱՍՍ-ին ասել են մարզի տրանսպորտի նախարարության ներկայացուցիչները:

«33 ավտոբուս, 766 մարդ ձյան պատճառով խցանման մեջ են Ռոստովի մարզի ճանապարհներին»,- նշել են գերատեսչությունում:

Նախարարությունում նաեւ ուշադրություն են դարձրել այն հանգամանքին, որ վատ եղանակային պայմանների պատճառով մարզի իշխանությունները որոշում են կայացրել փակել երթեւեկությունն ուղեւորատար ավտոբուսների համար մարզի հյուսիսային երթուղիներում:

«[Ուղեւորատար ավտոբուսների շարժման] բոլոր ուղղությունները դեպի հյուսիս M-4 «Դոն» գծով փակ են»,- նշվել է հաղորդագրությունում:

Մարտի 30-ին նաեւ որոշում է ընդունվել կայարանները փակելու մասին, որպեսզի մարզում վատ եղանակի պատճառով ստեղծված իրավիճակն ավելի չվատանա:

Արդեն մարտի 31-ին մի շարք ուղղություններում՝ Կրասնոդար, Ստավրոպոլ, Տագանրոգ, M-4 «Դոնը» կրկին գործում է:

Այժմ կոմունալ ծառայությունները եւ փրկարարները շարունակում են աշխատել ձյան հետեւանքները վերացնելու ուղղությամբ:

ԳՐԱԲԱՐԻ ԳԻՏԱԿՆԵՐ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ ԵՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ

Մարտի 29-ին ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ մարտի 22-ին կայացած «Լաւագոյն գրաբարագէտ» խորագրով հանրապետական օլիմպիադայի արդյունքների ամփոփումը: Կազմակերպիչներ՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության եւ ընդհանուր լեզվաբանության ամբիոն, ֆակուլտետի ՈՒԳԸ, «Դասական դպրոց» կրթական հիմնադրամ:

Միջոցառումը սկսվեց Տերունական աղոթքով, ապա Արարատյան Հայրապետական թեմի հոգեւոր հովիվ եւ թեմի «Գրաբարյան օրեր» ծրագրի համակարգող Տ. Պարթեւ քահանա Մուրադյանը ներկաներին փոխանցեց թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությունն ու գնահատանքի խոսքը:

Ելույթներով հանդես եկան նաեւ «Դասական դպրոց» ԿՀ տնօրեն Մանե Ղեւոնդյանը, «Իրական դպրոց» ԿՀ տնօրեն Վահագն Պողոսյանը, «Ինստիգեյթ» ընկերության տնօրեն Արման Պողոսյանը, ԵՊՀ հայոց լեզվի պատմության եւ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բ.գ. դ., պրոֆ. Աննա Աբաջյանը, ամբիոնի դոցենտ Նարինե Դիլբարյանը:

Ինչպես իր խոսքում նշեց «Դասական դպրոց» ԿՀ տնօրեն Մանե Ղեւոնդյանը, «Լաւագոյն գրաբարագէտ» օլիմպիադայի նպատակներն են հայոց դասական լեզվի շուրջ միավորել դպրոցականներին, ուսանողներին, դասախոսներին եւ այլ հետաքրքրված անձանց, խթանել ուսանողների հետաքրքրությունը դեպի հայոց դասական լեզվի նորովի ուսումնասիրումն ու մեկնաբանումը, դասական լեզուների համատեքստում վերաիմաստավորել հայոց դասական լեզվի դերը եւ, ի վերջո, ստեղծել մրցույթի մի ձեւաչափ, որը շարունակական կլինի եւ ժամանակի ընթացքում կընդգրկի առավել մեծ լսարան:

Աշխարհաբար տեքստը գրաբարի փոխադրման մրցույթում 1-ին կարգի մրցանակի արժանացավ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանող Անի Թադեւոսյանը, 2-րդ հորիզոնականը զբաղեցրեց նույն ֆակուլտետի ուսանող Թամարա Կարապետյանը, իսկ 3-րդ տեղում Արցախի պետական համալսարանի ուսանող Գոհար Հայրապետյանն էր:

Գրաբարով շարադրությունների մրցույթում լավագույնը Գեւորգյան ճեմարանի սան Արման Աբրահամյանի «Երկիր Նաիրի Հայաստանս» աշխատանքն էր: 2-րդ հորիզոնականը զբաղեցրեց Գեւորգյան ճեմարանի սան Գեւորգ սարկավագ Կարապետյանը, իսկ 3-րդում ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի ուսանող Ժենյա Ղազարյանն էր:

«Ակընկալում ենք, որ այս եւ յետագայ մրցոյթների յաղթողների հետ կը համագործակցենք մեր նոր դասագրքերի, ծրագրային ապահովման եւ այլ գրաբարեան նիւթերի ստեղծման գործում, քանի որ մաւտակայ տարիներին Գրաբարով նոր բովանդակութիւն ստեղծման կարիքը շատ ենք ունենալու» - իր խոսքում նշեց Վահագն Պողոսյանը՝ շնորհավորելով հաղթողներին:

Մրցանակային անվանակարգեր զբաղեցրած ուսանողները ստացան խրախուսական

դրամական պարգեւներ եւ մասնագիտական գրականություն գիտելիքներն ամրապնդելու նպատակով:

«Յունիբանկ»

ԼԱՎԱԳՈՒՅՆ private ԲԱՆԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Յունիբանկ»-ի private banking-ը՝ «Յունիբանկ Պրիվե»-ն, ճանաչվել է լավագույնը Հայաստանում՝ ըստ Euromoney Global Private Banking Awards 2023-ի: Հանդիսավոր արարողության ժամանակ, որը տեղի ունեցավ մարտի 29-ին Լոնդոնում, «Յունիբանկ»-ը Best Domestic Private Bank in Armenia անվանակարգի մրցանակակիր դարձավ:

Բանկային, ֆինանսական եւ ներդրումային ոլորտի ամենահեղինակավոր եւ ազդեցիկ պարբերականներից մեկի՝ Euromoney ամսագրի կողմից բանկի աշխատանքի որակի գնահատումը հաստատում է «Յունիբանկ»-ի բարձր մակարդակը պրեմիում բանկային ծառայությունների եւ կապիտալի կառավարման ոլորտում:

«Մեր թիմը շնորհակալ է Euromoney-ի փորձագետներին՝ private բանկինգի ուղղությամբ մեր աշխատանքի արդյունավետությունը գնահատելու համար: Հպարտ ենք ձեռք բերված արդյունքներով եւ ուրախ ենք, որ ավելի ու ավելի շատ մարդիկ են ընտրում «Յունիբանկ Պրիվե»-ն VIP ծառայությունների եւ իրենց ֆինանսների կառավարման համար: Մեր հաճախորդների եւ նրանց ընտանիքների երկարաժամկետ վստահությունը եւ բավարարվածության բարձր մակարդակը, որի արդյունքում բանկը ստացավ Euromoney-ի հեղինակավոր միջազգային մրցանակը, կարեւոր խթաններ են էլ ավելի հավակնոտ ծրագրերի համար»,- ասաց «Յունիբանկ» ԲԲԸ-ի վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը:

2022 թվականին «Յունիբանկ Պրիվե»-ի հաճախորդների թիվը, 2021 թվականի համեմատ, աճել է 30%-ով: Լավագույն միջազգային փորձին համապատասխան մշակված ծառայությունների հատուկ փաթեթները, հաճախորդների հանդեպ հոգատարությունն ու շուրջօրյա աջակցությունը, սպասարկման բարձր որակը բանկին դարձրել են հուսալի գործընկեր, որին հաճախորդը կարող է վստահել ինչպես ֆինանսական, այնպես էլ լայֆսթայլ հարցերի լուծումները:

«Յունիբանկ Պրիվե»-ն առաջարկում է անհատական ներդրումային ռազմավարության մշակում կապիտալի դիվերսիֆիկացման առավել շահավետ տարբերակների հաշվարկով: Անձնական մենեջերը միշտ պատրաստ է օգնել ֆինանսական հարցերում եւ լիարժեք աջակցություն ցուցաբերել բանկային գործարքների իրականացման ժամանակ:

Բանկը ոչ միայն ակտիվորեն զարգացնում է private banking&wealth management-ը Հայաստանում, այլ նաեւ տրամադրում է ծառայություններ արտասահմանում: Կոնսյերժ ծառայությունը հաճախորդներին եւ նրանց ընտանիքներին աջակցություն է տրամադրում անշարժ գույքի կամ տրանսպորտային միջոցների ձեռք բերման, վիզաների ստացման, արտասահմանում ճանապարհորդության եւ ուսման կազմակերպման, ավտոմեքենաների վարձույթի, հյուրանոցների եւ միջոցառումների տոմսերի ամրագրման հարցում: Այս մոտեցումը «Յունիբանկ Պրիվե»-ին թույլ է տալիս խնայել հաճախորդների ժամանակը եւ դարձնել նրանց կյանքն ավելի հարմարավետ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՏԿԱՑՈՒՄ

ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ ՆՈՐ ՄԵՆՅԱԿ ՈՒՆԻ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը մարտի 30-ին շրջայց է կատարել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբին հատկացված տարածք՝ տեղում ծանոթանալու շենքային առկա վիճակին, իրականացվող աշխատանքներին եւ առաջիկա անելիքներին: ArmLur.am-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից հայտնում են, որ շրջայցին ներկա է եղել նաեւ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը:

Նախարար Ժաննա Անդրեասյանը շրջել է տարածքում, հանգամանորեն ծանոթացել շենքի առկա վիճակին, որից հետո նվագախմբի տնօրենության հետ մանրամասն քննարկել է աշխատանքների ընթացքն ու նախատեսվող գործողությունները: Նվագախմբի տնօրեն Սարգիս Բալբաբյանը ներկայացրել է բոլոր գործընթացները՝ փուլային առաջնահերթությամբ: Նրա խոսքով՝ հատկացված շենքը շատ հարմար է նվագախմբի պրոֆեսիոնալ աշխատանքը կազմակերպելու համար, սակայն շենքի ներսում բավականին մեծ աշխատանքներ պետք է իրականացվեն:

Տնօրենն ընդգծել է՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբին ամրացված գույքն օգտագործվելու է որպես նվագախմբի փորձասենյակ, ձայնագրման ստուդիա, գործիքների պահեստ, ինչպես նաեւ ստեղծագործական եւ վարչատնտեսական անձնակազմի գրասենյակ: Նվագախմբի փորձերի իրականացման պարտադիր նորմերի եւ պայմանների ապահովման, ինչպես նաեւ անձնակազմի բնականոն գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ է կատարել համապատասխան աշխատանքներ:

Ժաննա Անդրեասյանն ընդգծել է սիմֆոնիկ նվագախմբին տարածք հատկացնելու կարեւորությունը եւ արձանագրել, որ արդեն պատրաստ է շենքի նորոգման նախագծանախահաշվային փաթեթը, եւ այժմ այն փորձաքննության փուլում է:

«Հստակ է, որ ունենալու ենք արդիական, ամբողջական ենթակառուցվածք՝ թե՛ փորձերի, թե՛ աշխատանքային տարածքի եւ թե՛ ձայնագրման ստուդիայի մասով: Հատկապես կարեւորում եմ, որ այդ ենթակառուցվածքները, ընդհանուր առմամբ, ծառայելու են ոլորտին: Օրինակ՝ ձայնագրության ստուդիաների մասով կան խնդիրներ, եւ սիմֆոնիկ նվագախմբի համար նախատեսված այս աշխատանքային միջավայրը, ձայնագրության ստուդիան կծառայեն նաեւ ոլորտի մեր մյուս կազմակերպություններին՝ ձայնագրությունների ֆոնդը թարմացնելու, նոր ձայնագրություններ անելու, փորձեր անցկացնելու նպատակով: Ունենք բազմաթիվ շնորհալի երաժիշտներ եւ նվագախմբեր, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում, սակայն ակնհայտ է, որ զուգահեռաբար առկա է տարածքների խնդիր: Եվ պատահական չէ, որ ակադեմիական քաղաքի շրջանակում խոսում ենք ժամանակակից համերգասրահ ունենալու անհրաժեշտության մասին: Վերջին տարիների միտումները ցույց են տալիս, որ հանդիսատեսն ակտիվորեն հաճախում է համերգասրահներ: Համերգների ժամանակ գրեթե չենք ունենում ազատ նստատեղեր, իսկ դա նշանակում է, որ մարդկանց համար հաղորդակցումը մշակութային կյանքին ավելի ու ավելի է կարեւորվում: Եվ այս համատեքստում անհրաժեշտ է ունենալ բոլոր այն պայմանները, որոնք կապահովեն այդ պահանջարկի որակյալ բավարարումը»,- ասել է նախարար Ժաննա Անդրեասյանը: Իրականացվող աշխատանքների ավարտից հետո շենքը հագեցած կլինի լիարժեք գույքային պայմաններով, նոր երաժշտական գործիքներով եւ ձայնագրման ստուդիայի համար անհրաժեշտ տեխնիկայով:

ԻՆՉ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Երեւանի մի շարք մանկապարտեզներում, տարբեր վարակային հիվանդություններով պայմանավորված, Առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման կանխարգելման ազգային կենտրոնը ստուգումներ է իրականացրել, եւ հայտնաբերվել են հութեռով եւ կարմրուկով վարակված երեխաներ:

Այս առնչությամբ ArmLur.am-ը զրուցեց առողջապահության նախարարի խոսնակ Հռիփսիմե Խաչատրյանի հետ, որն ասաց, որ ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը, աշխատանքային ընթացակարգի համաձայն, գնում է օջախի հայտնաբերման հետքերով տվյալ հաստատություններում:

Թեմայի շուրջ ArmLur.am-ը դիմեց նաեւ Երեւանի քաղաքապետարան, որտեղից մեզ պատասխանեցին. «Գոյություն ունի համաճարակային ֆիլտր, որի կանոններին համապատասխան՝ մենք իրականացնում ենք մեր աշխատանքը: Բուժքույրն ամեն օր մանկապարտեզ հաճախող երեխաներին անխտիր իրականացնում է ակնադիտական զննում. եթե հայտնաբերվում է, որ երեխան ունի առողջական խնդիրներ, նա մեկուսացվում է, ծնողը տեղեկացվում է, եւ երեխայի տվյալները փոխանցվում են ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման կենտրոն, մասնավորապես՝ ուշադրություն է դարձվում կարմրուկ համավարակի հայտնաբերմանն ու կանխարգելմանը»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱԲԱՑՎԵԼ Է ՊԼԱՆԵՏԱՐԻՈՒՄԸ

ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում կրկին վերաբացվել է «Երկնակամար» աստղացուցարանը (պլանետարիումը):

Պլանետարիումն իրենից ներկայացնում է գմբեթաձեւ պրոյեկցիոն էկրան: Այստեղ այցելուները կկարողանան դիտել աստղագիտության, բնագիտության եւ կենդանաբանության մասին ինչպես գիտակրթական, այնպես էլ ժամանցային բնույթի ատրակցիոն եւ մուլտիպլիկացիոն տեսաֆիլմեր:

Ֆիլմերը նախատեսված են տարբեր տարիքային խմբերի համար (5-7 տարեկան՝ նախակրթական, 7-11 տարեկան, 11-15 տարեկան):

Յուրաքանչյուր ֆիլմի տեւողությունը կազմում է 25-30 րոպե:

Պլանետարիումը հասանելի է շաբաթ եւ կիրակի օրերին՝ ժամը 10:00-18:00-ն:

Այն գործում է հետեւյալ արժեքներով՝
երեխաներ՝ 400 ՀՀ դրամ,
մեծահասակներ՝ 1,200 ՀՀ դրամ,
արտասահմանցիներ՝ 1,800 ՀՀ դրամ:

ՀԱՅՏՆԻ Է ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Հայտնի է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ավագ շաբաթվա արարողությունների ժամանակացույցը:

ԾԱՂԿԱԶԱՐԴ (ապրիլի 2)

- Առավոտյան ժամերգություն Ս. Հովհաննես Մկրտիչ-Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում՝ ժամը 8:00-ին,
- Անդաստան (ոստերի օրհնություն) եւ մանուկների օրհնություն Մայր Տաճարի բակում՝ ժամը 10:00-ին,
- Սուրբ Պատարագ եւ մանուկների օրհնություն Ս. Գայանե վանքում՝ ժամը 11:00,
- Դռնբացեքի կարգ Ս. Գայանե վանքում՝ ժամը 17:30:

ԱՎԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ՝ հիշատակ տասը կուսանաց (ապրիլ 4)

- Երեկոյան ժամերգություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ս. Հովհաննես Մկրտիչ-Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում՝ ժամը 17:30-ին:

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ (ապրիլի 6)

- Առավոտյան ժամերգություն եւ Կարգ ապաշխարողաց Սուրբ Հովհաննես Մկրտիչ-Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում՝ ժամը 8:00-ին,
- Սուրբ Պատարագ Սուրբ Գայանե վանքում՝ ժամը 10:30-ին,
- Ոտնլվայի կարգ Սուրբ Տրդատ Բաց խորանում՝ ժամը 16:00-ին,
- Խավարման կարգ Սուրբ Գայանե վանքում՝ ժամը 19:00-ին:

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ (ապրիլի 7)

- Խաչելության կարգ Սուրբ Գայանե վանքում՝ ժամը 12:00-ին,
- Երեկոյան ժամերգություն եւ Թաղման կարգ Սուրբ Տրդատ Բաց խորանում՝ ժամը 17:30-ին:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ (ապրիլի 8)

- Ճրագալույցի Սուրբ Պատարագ Ս. Գայանե վանքում՝ ժամը 17:30-ին:

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ (ապրիլի 9)

- Ջատկական Հայրապետական Սուրբ Պատարագ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում՝ ժամը 10:30-ին:

● *Ապրիլի 2-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Խատուտիկի գինի» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500-3500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Մի շարք բանկերի հետ կնքել եմ ավանդային պայմանագրեր: Արդյոք պետությունը, բանկը կամ այլ կազմակերպություն երաշխավորո՞ւմ է դրանք:

Հրանտ Մարտիրոսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, Ձեր ավանդները երաշխավորվում են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից, ընդ որում՝ երեշխավորված է թե՛ ավանդի մայր գումարը, թե՛ դրա նկատմամբ հաշվարկվող տոկոսը:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով երաշխավորված ավանդի (մայր գումար եւ հաշվարկված տոկոս) չափերն են՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է,

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժույթային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է:

Եթե ավանդատուն ունի ավանդներ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մի քանի բանկերում, ապա նրա ավանդները երաշխավորվում են յուրաքանչյուր բանկում առանձին:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաճախորդն իրավունք ունի իր հաշվում առկա դրամական միջոցները տնօրինել իր հայեցողությամբ՝ բանկին հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու կարգադրություն տալով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է հաշվարկվում աշխատանքային ստաժը: Ուզում եմ ծանոթանալ հաշվարկման կարգին:

Ամալյա Մխոյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Մխոյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ աշխատանքային ստաժում հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի ընդունելուց մինչեւ ազատելու օրն ընկած ժամանակահատվածները, այլ գործունեության ժամանակահատվածները, ինչպես նաեւ զինվորական ծառայության ժամանակահատվածները: Ստաժում հաշվարկվում են յուրաքանչյուր ժամանակահատվածի տարին, ամիսը, օրը, այնուհետեւ գումարվում, ընդ որում՝ յուրաքանչյուր 30 օրը հաշվառվում է որպես մեկ լրիվ ամիս, իսկ յուրաքանչյուր 12 ամիսը՝ մեկ լրիվ տարի: Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչեւ 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար՝ անհրաժեշտ առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում, իսկ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելիս օրենքի 12-րդ հոդվածով սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում է նաեւ ծնողներից մեկի՝ հաշմանդամ երեխային մինչեւ նրա 18 տարին լրանալը, կամ խնամակալ ճանաչված անձի առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ տասը տարուց ոչ ավելի:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Սեւան-Գավառ ավտոճանապարհին

Լուսանկարն արվել է «Ձմեռը վերադարձել է». իրավիճակը՝ Սեւան-Գավառ ճանապարհատվածում: ArmLur.am-ը Սեւան-Գավառ ճանապարհահատվածում ֆիքսել է կադրեր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 6 - 11 0 + 5
Կոտայքի լեռներ	- 5 - 9 -1 - 4
Կոտայքի նախալեռներ	- 2 - 4 +4 + 6
Գեղարքունիք	- 4 - 9 - 0 - 3
Լոռի	- 1 + 5 - 2 + 1
Տավուշ	+ 1 + 4 0 + 5
Արագածոտնի լեռներ	- 3 - 6 0 - 3
Արագածոտնի նախալեռներ	0 + 4 + 5 + 8

Արարատ	+ 4 + 7 + 9 + 12
Արմավիր	+ 3 + 5 + 12 + 14
Վայոց ձորի լեռներ	- 1 - 3 0 + 2
Վայոց ձորի նախալեռներ	+ 4 + 7 + 8 + 11
Սյունիքի հովիտներ	+ 2 + 5 + 4 + 8
Սյունիքի նախալեռներ	- 1 + 3 - 2 + 2
Արցախ	+ 2 + 6 + 5 + 8
Երեւան	- 1 + 1 + 7 + 9

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.03.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Հանքարծոնյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*